



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/114/2024

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

23 մայիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2024 թվականի մայիսի 23-ին քննելով Քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժնի պետ Մացակ Փանոսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/114/2024 գործը՝

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումներով, բարեվարքության ուսումնասիրության գործընթացի շրջանակներում իրականացրել է դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող ՀՀ Քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժնի պետ Մացակ Փանոսյանի կողմից 2023 թվականի մայիսի 29-ին ներկայացված «Պաշտոնատար անձի՝ 2022 թվականի գույքի,

եկամուտների, ծախսերի և շահերի» տարեկան հայտարարագրում ներկայացված (այսուհետ՝ Հայտարարագիր) գույքային տվյալների ստուգում, որի արդյունքում պարզել է.

1.2 Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցներ» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում Մացակ Փանոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ վերջինիս անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա անկանխիկ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ, մինչդեռ, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Մացակ Փանոսյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ առկա են եղել **2,807,593.00 ՀՀ դրամ** անկանխիկ դրամական միջոցների մնացորդներ:

1.3 Հանձնաժողովը, Մացակ Փանոսյանի Հայտարարագրում չներկայացված տվյալների հիմքով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ նախաձեռնելու՝ 2024 թվականի մարտի 22-ի որոշման կապակցությամբ 2024 թվականի մարտի 25-ին Մացակ Փանոսյանին հասցեագրել է թիվ 01/987-2024 ծանուցումը՝ այն օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնված (ստացված) համարվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը՝ 15:00-ին հրավիրելով Հանձնաժողով վերոնշյալ առերևույթ խախտման վերաբերյալ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, իսկ վեցերորդ աշխատանքային օրը, ժամը՝ 15:00-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու:

1.4 2024 թվականի մայիսի 7-ին վարույթի մասնակցից ստացված թիվ Մ-2097-2024 գրությամբ ներկայացվել է պարզաբանում, որով վարույթի մասնակիցը, միաժամանակ, միջնորդել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմել իր բացակայությամբ:

1.5 2024 թվականի մայիսի 7-ին պատշաճ ծանուցված (ծանուցումը վարույթի մասնակցի կողմից ստացվել է 2024 թվականի մայիսի 2-ին) վարույթի մասնակցի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/132/24 արձանագրությունը՝

Օրենսգրքի 169.28րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.6 2024 թվականի մայիսի 14-ին վարույթի մասնակցից ստացված թիվ Մ-2138-2024 գրությամբ ներկայացվել են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ Ընկերության իրեն պատկանող քարտային հաշվի քաղվածքները, իսկ նույն ամսաթվին ներկայացված Մ-2156-2024 գրությամբ վերջինս խնդրել է լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու նպատակով հետաձգել 2024 թվականի մայիսի 13-ին նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը:

1.7 Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 14-ի թիվ 01/1536-2024 գրությամբ Մացակ Փանոսյանը ծանուցվել է նույն թվականի մայիսի 23-ին ժամը՝ 15:30-ին նշանակված գործի քննության մասին:

1.8 2024 թվականի մայիսի 22-ին վարույթի մասնակցի կողմից ներկայացված թիվ Մ-2345-2024 գրությամբ վերջինս խնդրել է գործի քննությանն իր բացակայությունը համարել հարգելի և կարճել վարչական վարույթը՝ միաժամանակ ներկայացնելով բանկային հաշվի վերաբերյալ քաղվածք:

1.9 2024 թվականի մայիսի 23-ին գործի քննությունն իրականացվել է պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի բացակայությամբ:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2.1 Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/114/2024 գործի շրջանակներում արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ 2024 թվականի մայիսի 7-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ Մ-2097-2024 գրությամբ վարույթի մասնակիցը ներկայացրել է պարզաբանում առ այն, որ Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցներ» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում տվյալները լրացնելիս տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ՝ բացթողում: Վարույթի մասնակցի պնդմամբ որևէ տվյալ թաքցնելու նպատակ, դիտավորություն չի եղել, քանի որ ինքն է Հանձնաժողովին համաձայնություն տվել իր դրամական միջոցները և բանկային հաշիվները ստուգելու համար:

Բացի այդ, ավելի քան իմաստագուրկ է իր քարտային հաշվին առկա դրամական միջոցների չներկայացնելու կամ թաքցնելու «ցանկությունը», դիտավորությունը, քանզի հիշյալ գումարը գոյացել է բացառապես աշխատավարձի խնայողություններից:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրել է Հանձնաժողովին իր նկատմամբ հարուցված վարույթը կարճել:

2.2 2024 թվականի մայիսի 22-ին վարույթի մասնակցի կողմից ներկայացված թիվ Մ-2345-2024 գրությամբ ներկայացված պարզաբանման (այսուհետ միասին՝ Պարզաբանում) համաձայն՝ Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցներ» բաժնում բանկային հաշիվներին առկա անկանխիկ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ տեղեկատվությունը չի նշվել ոչ թե դիտավորությամբ կամ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու պատճառով ու/կամ նպատակով, այլ զուտ տեխնիկական վրիպակի՝ բացթողման հետևանքով: Միաժամանակ, հայտնել է, որ Հերմինե Լամբարյանը հանդիսացել է Սպիտակի քննչական բաժնի առաջատար մասնագետը, իսկ Էդուարդ Չոբանյանը՝ ընկերը, որոնք իրեն պատկանող կանխիկ գումարներն իր խնդրանքով փոխանցել են իր բանկային հաշվին: Գրությանը կից վարույթի մասնակցի կողմից ներկայացվել են իրեն պատկանող բանկային հաշվի 2022 թվականի մուտքային գործարքների վերաբերյալ քաղվածքները:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/114/2024 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցներ» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում Մացակ Փանոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ վերջինիս անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա անկանխիկ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ, մինչդեռ, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Մացակ Փանոսյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ առկա են եղել **2,807,593.00 ՀՀ դրամ** անկանխիկ դրամական միջոցների

մնացորդներ: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժնի պետ Մացակ Փանոսյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա): Նույն հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը և արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը:

4.3 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես

նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ **վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:**

4.6 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.7 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Մասնավորապես, գույքի հայտարարագրի դեպքում՝ գույքի տեսակը, դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող **հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով Քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժնի պետ Մացակ Փանոսյանը Հայտարարագրում **անզգուշությամբ** ներկայացրել է հետևյալ ոչ ամբողջական տվյալը.

Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցներ» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում Մացակ Փանոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ վերջինիս անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա **2,807,593.00 ՀՀ դրամ** անկանխիկ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

Նշված արարքով Մացակ Փանոսյանը **խախտել է** Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջները: Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

Հաշվի առնելով արձանագրված իրավախախտման նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները՝ սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Մացակ Փանոսյանը

Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Անդրադառնալով 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,807,593.00 ՀՀ դրամի չափով չհայտարարագրված դրամական մնացորդների վերաբերյալ վարույթի մասնակցի դիրքորոշմանն առ այն, որ Հայտարարագրում արձանագրված գումարի՝ որպես դրամական միջոցների մնացորդներ, չհայտարարագրումը պայմանավորված է տեխնիկական վրիպակով և հանդիսանում է զուտ բացթողում, իսկ չհայտարարագրված գումարը գոյացել է բացառապես աշխատավարձի խնայողություններից, Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Հայտարարագրի հանձնումը կատարելուց առաջ հայտարարատուն հնարավորություն ունի նախնական դիտման ռեժիմով, տեսանելի ձևով համակարգում հավաստիանալ տվյալներն արդյոք լրացված են ամբողջապես, և այնուհետև կատարել հանձնման գործողությունը: Հետևաբար, վերջինս է կրում Հայտարարագրում ճիշտ և ամբողջական տվյալներ ներկայացնելու պատասխանատվությունը, հատկապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագրային կամ տեխնիկական խնդրի առնչությամբ Հանձնաժողովին դիմելու վերաբերյալ որևէ տվյալ առկա չէ:

Բացի այդ, Մացակ Փանոսյանի կողմից 2024 թվականի մայիսի 7-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ Մ-2097-2024 գրությամբ ներկայացված պարզաբանմանը կից ներկայացվել է 2021-2022 թվականներն ընկած ժամանակահատվածի՝

Ընկերության վերջինիս պատկանող քարտային հաշվի քաղվածքը, որի

ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ քաղվածքում արտացոլված են միայն 2021-2022 թվականների ելքային գործարքների վերաբերյալ տվյալներ, և առհասարակ, բացակայում է նշված ժամանակահատվածում մուտքային գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

2024 թվականի մայիսի 22-ին վարույթի մասնակցի կողմից թիվ Մ-2345-2024 գրությամբ ներկայացված պարզաբանմանը կցված է վարույթի մասնակցի քարտային հաշվի շրջանառության վերաբերյալ այլ քաղվածք, որում արտացոլված տվյալների համաձայն՝ տվյալ հաշվին ի թիվս ՀՀ քննչական կոմիտեից որպես աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ ստացված գումարի, պարբերաբար կատարվել են նաև կանխիկ մուտքեր և փոխանցումներ ֆիզիկական անձանց կողմից, մասնավորապես՝

կողմից՝ ՀՀ դրամի չափով,
կողմից՝ , կողմից՝ ՀՀ դրամի
չափով, ինչպես նաև հաշվի համալրումներ՝ և ՀՀ դրամի չափով:

Վարույթի մասնակցից Պարզաբանմամբ հայտնել է, որ Հերմինե Լամբարյանը հանդիսացել է Սպիտակի քննչական բաժնի առաջատար մասնագետը, իսկ Էդուարդ Չոբանյանը՝ ընկերը, որոնք իրեն պատկանող կանխիկ գումարներն իր խնդրանքով փոխանցել են իր բանկային հաշվին:

Վերոնշյալի համատեքստում Հանձնաժողովը, անդրադառնալով իր կողմից նախորդիվ կայացված որոշումներին (2022 թվականի մայիսի 27-ի թիվ ՎԻՎ/24/22), արձանագրում է, որ գույքի հայտարարագրում ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու հետ կապված նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ պաշտոնատար անձի բանկային հաշիվներին 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դրամական միջոցների մնացորդն արդեն իսկ հայտարարագրվել է «Գ.1. հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում որպես հայտարարագրման ենթակա եկամուտ, որպիսի պարագայում ներկայացվել են եկամտի ստացման տեսակը, աղբյուրը, չափը: Նման պայմաններում Հանձնաժողովը էական է համարել այն, որ հայտարարատուի կողմից ներկայացվել են այնպիսի ապացույցներ, որոնցով հավաստվում է չհայտարարագրված

դրամական միջոցների աղբյուրների օրինականությունը՝ ապահովելով պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականության, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության, պետական պաշտոն զբաղեցնող անձի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության՝ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները:

Բացի այդ, Հանձնաժողովը փաստել է, որ թեև հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում նշված տվյալները չեն ներկայացվել ամբողջական կերպով, սակայն հայտարարագրի «Գ.1. հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում դրանք ներկայացվել են ներառյալ օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա բոլոր տվյալները (եկամտի տեսակը, եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը, եկամուտ վճարողի հասցեն, գումարը, արժույթը): Հանձնաժողովն արձանագրել է, որ ոչ ամբողջական ներկայացված դրամական միջոցների մնացորդների ծագման աղբյուրները համընկնում են հայտարարատու անձի այն եկամուտների հետ, որոնց ծագման աղբյուրները արտացոլվել են «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» դաշտում, հայտարարագրված են ընդհանուր եկամտի շրջանակներում: Նշված հանգամանքները մատնանշում են, որ խախտման արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Հանձնաժողովի կողմից կայացված մեկ այլ որոշմամբ (2022 թվականի մայիսի 18-ի թիվ ՎԻՎ/15/2022) հայտարարատու պաշտոնատար անձի կողմից չհայտարարագրված գումարի ընդհանուր չափը չի գերազանցում պաշտոնատար անձի պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը: Բացի այդ, նույն գործով Հանձնաժողովն արձանագրել է նաև, որ հայտարարատուի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներից յուրաքանչյուրի մնացորդի չափը չի գերազանցել 200,000.00 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Նման պայմաններում Հանձնաժողովն էական է համարել այն, որ հայտարարատուի կողմից ներկայացվել են այնպիսի ապացույցներ, որոնցով հավաստվում է չհայտարարագրված դրամական միջոցների **աղբյուրների օրինականությունը՝** ապահովելով պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային

հաշվետվողականության, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության, պետական պաշտոն զբաղեցնող անձի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության՝ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները:

Սույն գործով առկա փաստական հանգամանքները տարբերվում են վկայակոչված գործերով ներկայացված հանգամանքներից, նախևառաջ, այն առումով, որ սույն դեպքում «Բ.6. Դրամական միջոցներ» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում չհայտարարագրված գումարը՝ **2,807,593.00 ՀՀ դրամը**, գերազանցում է 200, 000.00 ՀՀ դրամը, ինչպես նաև հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի չափը: Հաջորդիվ այն առումով, որ թեև Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում ներկայացված է 8,658,932.00 ՀՀ դրամ ստացված աշխատավարձի վերաբերյալ տվյալ, սակայն վերոնշյալ տվյալի ներկայացումը դեռևս չի վկայում այն մասին, որ հայտարարատուի կողմից դրամական միջոցների մնացորդները, որոնց չհայտարարագրման արարքը հանդիսանում է սույն վարույթի առարկան, Հանձնաժողովի կողմից կարող են դիտարկվել բացառապես որպես մեկ աղբյուրից՝ ՀՀ քննչական կոմիտեից ստացված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վարույթի մասնակցի կողմից ներկայացված բանկային հաշվի քաղվածքում արտացոլված տվյալների համաձայն՝ վերջինիս հաշվին բացի աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից կատարվել են նաև կանխիկ մուտքեր տարբեր ֆիզիկական անձանց կողմից: Թեև վարույթի մասնակիցն իր Պարզաբանմամբ նշել է, որ մի դեպքում իր ընկերը, մյուս դեպքում իր գործընկերն իրեն պատկանող կանխիկ գումարներն իր խնդրանքով փոխանցել են իր բանկային հաշվին, մինչդեռ, սույն վարույթի շրջանակներում չեն ներկայացվել վերոնշյալ դրամական միջոցների՝ վարույթի մասնակցին պատկանելու և իր խնդրանքով իր իսկ բանկային հաշվին փոխանցելու առնչությամբ հիմնավորող փաստաթղթեր: Ավելին, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նաև ընդգծել այն հանգամանքը, որ ըստ բանկային հաշվի քաղվածքում արտացոլված տվյալների մեկ այլ ֆիզիկական անձի՝

կողմից ևս վարույթի մասնակցին

կատարվել է գումարի փոխանցում (ՀՀ դրամի չափով), որին վարույթի մասնակիցն իր Պարզաբանմամբ ընդանրապես չի անդրադարձել և վերոնշյալի առնչությամբ որևէ հիմնավորող փաստաթուղթ ևս չի ներկայացրել: Տվյալ պարագայում, Հանձնաժողովն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել ձեռք բերելու նշված փաստական հանգամանքի վերաբերյալ որևէ այլ ապացույց, մինչդեռ, «Վարչարարության և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ այդ թվում վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման վերաբերյալ օրենսդրական պահանջի, ինչպես նաև 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված ապացուցման բեռի բաշխման կանոնակարգումների համաձայն՝ տվյալ պարագայում, վարույթի մասնակիցն է կրում իր կողմից վկայակոչված բարենպաստ հանգամանքները հիմնավորող փաստական հիմքերը, առկայության դեպքում, Հանձնաժողովին ներկայացնելու պարտականությունը:

Հանձնաժողովն էական է համարում նաև այն հանգամանքը, որ տվյալ պարագայում Հանձնաժողովը հնարավորություն չունի տարբեր ֆիզիկական անձանց կողմից հայտարարատու պաշտոնատար անձի հաշվին մուտքագրված գումարների ծագման աղբյուրի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ ձեռք բերելու, իսկ վարույթի մասնակցի կողմից ներկայացված ապացույցներով չի հավաստվում վերջինիս բանկային հաշվին առկա դրամական միջոցների մնացորդների ծագման օրինականությունը:

Հանձնաժողովը սույն վարույթի շրջանակներում չի տիրապետում այնպիսի վերաբերելի ապացույցների, որոնք վերահսկելի տվյալներ են արտացոլում և ռիսկայնության առումով Հանձնաժողովի կասկածները կփարատվեին համապատասխան տվյալների ստուգման միջոցով: Հետևաբար, արձանագրելով, որ Հանձնաժողովին չեն ներկայացվել համապատասխան տվյալների արժանահավատությունը հավաստող ապացույցներ, այլ ներկայացված տվյալները հիմնված են միայն վարույթի մասնակցի հայտարարության և Հանձնաժողովին ոչ հասանելի ստուգման փաստարկների վրա, ապա նշված պարագայում Հանձնաժողովը տվյալների արժանահավատությունը ստուգելու որևէ գործիքակազմ չունենալու պայմաններում չի կարող արձանագրված առերևույթ իրավախախտումը նվազ նշանակության որակել:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն իրողությունը, որ հայտարարագրման համակարգը նպատակ է հետապնդում պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկությունների բացահայտման միջոցով ձևավորել պետական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահություն և բարձրացնել նրանց գործունեության թափանցիկությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարագրում թվարկված տվյալների ներկայացման միջոցով սպառիչ և ամբողջական կերպով արտացոլվում են հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության առնչությամբ անհրաժեշտ տվյալները, օրենսդիրը սահմանել է պարտադիր ներկայացման ենթակա տվյալների ցանկը: Մինչդեռ, սույն գործի շրջանակներում եկամուտներ բաժնում՝ ստացված աշխատավարձի վերաբերյալ տվյալների ներկայացմամբ ամբողջությամբ չի ապահովվում գույքի հայտարարագրի դրամական մնացորդներ բաժնում օրենքով սահմանված ամբողջական տվյալներ ներկայացնելու պահանջը: Տվյալ պարագայում, հայտարարատու պաշտոնատար անձի կողմից եկամուտների վերաբերյալ հայտարարագրված տվյալով, ըստ էության, չի բացահայտվում հայտարարատու պաշտոնատար անձի անվամբ սպասարկվող բանկային հաշվին առկա դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ տվյալը, որպիսի պայմաններում չի ուղենշվել գույքի հայտարարագրման օրենսդրի կողմից սահմանված նպատակը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Տվյալ պարագայում, սույն գործով քննարկվող հայտարարագրման ենթակա տվյալների հայտարարագրմամբ է հնարավոր ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականության, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ

վստահության, պետական պաշտոն զբաղեցնող անձի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության՝ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (**տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով**), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով վարչական վարույթի մասնակցի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող, ինչպես նաև Օրենսգրքի 34-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 282-րդ, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժնի պետ Մացակ Փանոսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ **200 000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «**նպատակ**» դաշտում **պարտադիր նշելով սույն որոշման համարը:**

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մացակ Փանոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Մացակ Փանոսյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՅԱՆ